

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հայտարարվում է մրցույթ ՀՀ Սյունիքի մարզի << Մեղրիի թիվ 1 միջնակարգ դպրոց >> ՊՈԱԿ-ի Ֆիզկուլտուրա/21 ժամ/ ուսուցչի թափուր տեղի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է/ձև 1/
2. Փաստաթուղթ/դիպլոմ/ << Հանրակրթության մասին >> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն/Ձև 4/,
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները/դրանց առկայության դեպքում/
6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունք,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերը ընդունվում են մինչև 2022 թ.-ի հունվարի 26-ից փետրվարի 9 -ը ներառյալ ժամը 10:00-14:00, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային օրերի, Մեղրու թիվ 1 միջնակարգ դպրոցում:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա Մեղրիի թիվ 1 միջնակարգ դպրոցում 2022 թ.-ի փետրվարի 11-ին ժամը 14:00-ին: Հասցե՝ ք. Մեղրի Ադելյան 1:

Տեղեկությունների համար զանգահարել 094043525 հեռախոսահամարով: